

Ա. Մարգարյան

ԲԱՌԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅՈՑ ԵՎ ՎՐԱՅ ԼԵՋՈՒՆԵՐՈՒՄ

(Ընդհանուր ձևերն ու միջոցները)

Լեզվաշինարարության և լեզվամատածողության ընդհանուր պրոցեսում բառազադավարների դրսևորման սկզբնական ձևերը (դարձվածքները) անմիջապես կապվում են նախ և առաջ, մարմնի զանազան մասերի կամ անդամների հետ, օրինակ՝ ձեռքի, ոտքի, գլխի, աչքի, բերանի, երեսի, լեզվի, սրտի և այլնի հետ, որոնք ամենաթանկագինն են մարդու կյանքի համար։ Մարդու մարմնի անդամների հետ կապված արտահայտությունները, այս կամ այն չափով, կարելի է տեսնել բոլոր լեզուներում, մանավանդ հայոց և վրաց լեզուներում, որտեղ այդ կարգի ընդհանուր արտահայտություններն այնքան նման են իրար, որ թվում է, թե մեկը մյուսի բացի թարգմանությունն է։

Բայց դա, իրոք, այդպես չէ։

Դրանք մեծ մասամբ, պարզ է, որ հնագույն լեզվամատածողության արդյունք են՝ ստեղծված իրարից անկախաբար, լեզուների ստադիալ դարգացման միևնույն աստիճանին և որոնք, իբրև վերապրուկներ, այսօր անհամեմատ ավելի մեծ չափերով պահպանված են ժողովրդական լեզուներում (բարբառներում)։

Նրանք աստիճանաբար, լեզվամատածողության փոփոխության հետ միասին, փոխել են իրենց սկզբնական (ուղղակի) նշանակությունը և արտահայտման ձևերով ու միջոցներով մնացել զրեթե նույնը, իսկ ձևի և բովանդակության մի այնպիսի հակասություն է առաջ եկել նրանց մեջ, որ շատ հաճախ տարբեր լեզվամատածելակերպ ունեցող մարդու համար այսօր արդեն ղեկավար հասկանալի են։

Դրանք այն ժամանակվա լեզվով խոսող մարդու, այսպես ասած, աշխարհաճանաչման ու ինքնագիտակցման (ինքն իրեն ճանաչման) հետ կապված հնագույն մատածողության տարբեր վերապրուկներն են, որոնք այսօր պահպանված են արդեն իբրև յուրահատկություններ։

Այս չէ մեզ այստեղ զբաղեցնողը։

Մենք այստեղ վերցնում ենք մի ժամանակ իրար հարադիր հանդես եկող և մի գաղափար արտահայտող, մեզ հետաքրքրող երկու լեզվի այն բառաձևերը, որոնք՝ նմանապես լեզվամատածողության փոփոխության հետ միասին՝ փոխել են իրենց նշանակությունը և այսօր ըմբռնվում են իբրև մի բառական միություն (կամ ամբողջություն)։ Դրանք, այսպես ասած, բառաստեղծության դրսևորման սկզբնական ձևերն են, որոնք երբեմն նույնիսկ իրար կցվելով, հանդես են գալիս որպես մի ամբողջություն։

I.

Այսօր մի ամբողջական (կամ միասնական) բառազադափար արտահայտող հարադիրներից բազմաթիվ ընդհանուր օրինակներ կան հայոց և վրաց լեզուներում: Այդպիսիներից մենք կարող ենք վերցնել, օր., կեր-ու-խում¹ = յեմ-սեմ (համ-ասմա), առ-ու-տուր = աղեծ-մուցեմ (աղեք-միցեմ), անց-ու-դարձ = մոսցլա-մոսցլա (միսվլա-մոսվլա), ինչպես նաև՝ տար-ու-բեր = վրց. միրխեվ-մուրխեվա... և այլն:

Նման բառերը երկու լեզվում էլ բոլորովին փոխել են իրենց սկզբնական նշանակությունը ու ստացել արդեն նոր իմաստ. օր. այսօր երբ ասում ենք՝ առ-ու-տուր (կամ առ-և-տուր) — աղեծ-մուցեմ (աղեք-միցեմ), ինչպես հայտնի է, սկզբում նշանակել է ուղղակի առնել ու տալ, բայց այժմ արդեն ստացել է «վաճառականություն» նոր իմաստը: Այսպես նաև ել-ու-մուտ = Ձեռնաշնչա-ձեռնաշնչա (շեսափալ-գասափալի) նախ նշանակել է «ելնել ու մտնել» և ապա՝ «ֆինանս», իսկ աղ-ու-հաց = շր-մարիլ (պուր-մարիլի) բառ-արտահայտությունը ստացել է նույնիսկ տարբեր նշանակություններ, այն է՝ «հյուրասիրություն», բարեկամություն, երախտիք, լավություն» [օր. տարբեր արտահայտությունների մեջ, ինչպես՝ «աղուցը մոռացավ» = վրց. պուր-մարիլիս դավիճո՛ւք: «երախտիքը մոռանալ», «աղուցը մոռացավ» = վրց. պուր-մարիլիանի կացի «հյուրասեր մարդ»... և այլն]: Այս ձևով նաև՝ կեր-ու-խում = վրց. ճամ-սամ «քեֆ-ուրախություն», կու-ու-կապ = վրց. շեկվա-շերունվա «պապանձվել, շկվել, շփվել, բան չկարողանալ ասել»... և այլն:

Այս ձևով են ստեղծված նաև հարադրական բայերը, որ առանձնապես հատուկ են հայոց և վրաց լեզուներին: Գաղավում են մի բայի և մի հարադիր բառից, որ լինում է բայի լրացումը, և երկուսը միասին արտահայտում են մի բառի նշանակություն, հաճախ նույնիսկ մի բառով փոխարինվելով, ինչպես, օր., ձայն տալ (կամ՝ ձայնել) = նման ծագում (խմիս գացեմ կամ գամոխմուրեքա), թույլ տալ (կամ՝ թուլատել) = նման ծագում (նեքիս միցեմ կամ նեքարթվա), դուրս անել (կամ՝ արտաքսել) = ~~ցածր~~ ~~ցածր~~ (գարեք գազգեքա կամ՝ գամոզեքա), ինչպես նաև՝ գովք անել (կամ՝ գովել) = վրց. քեքիս շեսիմ կամ՝ քեք... և այլն:

Երկու լեզվում էլ շատ գործածական են այնպիսի հարադրություններ, որոնց մեջ բայը պահում է իր հիմնական նշանակությունը, իսկ հարակից բառը, որ սովորաբար լինում է տեղի գաղափար արտահայտող բառ (իբրև մակբայ), ուժեղացնում կամ պարզում է բայի նշանակությունը. այսպես, օր. դուրս ելնել — յառն ծամոցլա (կարշի գամոսվա), ներս մտնել = Ձեռ Ձեռցլա (շիդ շեսվա), վայր իջնել = ժոռն համոցլա (ժիրս չամոսվա), ինչպես նաև՝ ետ դալ = վրց. ուկամ մոսվա, մոտ դալ = վրց. ախյո մոսվա... և այլն:²

¹ Այս կարգի հյ. օրինակները բերում եմ մեծ մասամբ Մ. Արեղյանի «Հայոց լեզվի առաջին» (Երևան, 1931) գրքից:

² Այս կարգի հյ. բաղադրությունները սովորաբար համապատասխանում են նախդրովոր լեզուների (օր.՝ առաքելների) նախաբայամասնիկներով կազմված բայերին: Ճիշտ է, վրացերենն էլ նախդրովոր լեզու է, այն է՝ վրց. բայերին շատ սովորական են նախամասնիկները, բայց նրանց կողքին գործ ենածվում նաև տեղ նշանակող բառերը (բայեսմակերաններ):

Այս կտրգի բայերից կարող ենք վերցնել՝

ա) ներս=ձին (շին կամ շիզ) րառով՝ ներս գնալ=ձին ծեցվալ (շին շինվալ), ներս ընկնել=ձին ծեցաճալ (շին շեկարկման), ներս գցել=ձիգ ծեցվալ (շիզ շեկարկման)։ ախպես նաև՝ ներս քաշել=վրց. շիզ շեկարկման, ներս ածել=վրց. շիզ շեկարկման, ներս տանել=վրց. շիզ շեկարկման կամ՝ շիզ շեկարկման... և այլն։

բ) Դուրս=գարտ (գարնթ) բառով դուրս գնալ=գարտ ծախել (գարնիք գապկալ), դուրս ընկնել=գարտ ծախարձնա (դարնիք դավարդնա), դուրս գցել=գարտ ծախել (գարնիք գազդնա). այսպես նաև՝ դուրս քաշել=վրց. գարնիք գաժնկա, դուրս ածել=վրց. գարնիք գամադ'րա, դուրս բերել=վրց. գարնիք գամառանա կամ՝ գարնիք գամադ'կանա, դուրս տանել=վրց. գարնիք գատնա, կամ՝ գարնիք գադ'կանա... և այլն:

դ) Մեջ = Յոց (չիդ) բառով՝ մեջ ընկնել = Յոց հաջորդնա (չիդ չավարդնա),
մեջ քաշել = Յոց ջեղճել (չիդ շեծել), մեջ մտնել = Յոց ջեղճել (չիդ շեծել) ... և այլն:

գ) Վայր—ածը (գարա) բառով՝ վայր ընկել = ընկնել (դաշտը) (դաշտը դաշտը), վայր գցել = ածը ընկնել (դաշտը դաշտը), վայր բերել = ածը ընկնել (դաշտը դաշտը), այսպես նաև՝ վայր իջնել = վրջ (դաշտը դաշտը), վայր ընել = վրջ (դաշտը դաշտը)...

ბ) ნთ=უკან (ილხან) რაიიქ' ხო იაი=უკან მოსვლა (ილხან მოიქცა), ხო მხაქ=უკან დაბრუნება (ილხან იარეზიდა), ხო ჭახელ=უკან გაწვევა (ილხან დაბნელა). აიყახხა ზახს' ხო აბხელ=ყრე. ილხან გაბრუნდა ღამა' ილხან გადგრა, ხო რხრელ=ყრე. ილხან მოგონდა, ხო ზახელ=ყრე. ილხან მიტოვდა... ხო აიყახ,

դ) Առաջ=հին (ծին) բառով՝ առաջ քաշել=հին հանգցնել (ծին ծածկվա),
առաջ դնել=հին նշան (ծին սկսվա), առաջ նայել=հին պահանջ (ծին պահանջ
դրելա), առաջ նախ՝ առաջ դիմել=վրդ. ծին սկսվա... և այլն:

է) Վրա=ზედ (գեղ) բառով՝ վրա գալ=ზოი მოხელა (გეი მოძალა),
 վրა გვხლ=ზედ რაგდება (გეი რაგდებრა), վრა ღუზხლ=ზედ ღაცება (გეი
 რაგხმრა). აქაყანა ზანს՝ վრა ყრბხლ=ყრგ. გეი მძაძარეზრა.. ხ აქან,

რ) შინა=ახლო (აქი) რაიიქ' აით ფაქ=ახლო მოხელა (აქი ათა-
ქი), აით ფაქელ=ახლო მიწვეა (აქი აქიხელა), აით რხრელ=ახლო მოტანა
(აქი ათიხანა)... **ბ აქი**.

ბ) ჩხუ = აქეთ (აქებ) გაიი - გზა = აქეთ მოსვლა (აქებ მის-
ქა), გზა გზებ = აქეთ მოტანა (აქებ მოთმისა), გზა გზებ = აქეთ მოწევა
(აქებ მოძებ)... ს აქებ.

ժ) Դեն = ռոյոտ (ի քիթ) բառով՝ դեն դնալ = ռոյոտ ֆանշլա (հիսն ծաւ-
ւալ), դեն գցել = ռոյոտ ղաձաղձեծա (ի փի զաղազղեքա), դեն քաշել = ռոյոտ
քաշել (ի փի զաձեւա), ալապեն նան՝ դեն դնել = վրց. ի փի զաղեքա...
և այլն:

ძა) ნაკრ=ქვე (ძეხე) რაიოქ' საკრ ვეხე=ქვე ჩავდება (წყხე ად-
 ეხეა), საკრ მთხე=ქვე შეხეა (წყხე ხეძეა), საკრ ჟეხე ქვე შეხე
 (წყხე ხეძეა). აქაჲს ხანს' საკრ ეხე=ქვე. წყხე ეთეძე... ს აქხე,

ძრ) ჰხარ=თან (ქანს) გაოიქ' ზხარფაი=თან მოსვლა (ქანს მიჰყავს),
 ზხარ რხრხი=თან მოტანა (ქანს მიჰყავს კამ' ჟანს მიჰყავს), ზხარ
 თანხი=თან წაღება (ქანს ბაღიქა კამ' ჟანს მიჰყავს)... ს აქი, ს აქი,

Այս կարգի բայերի մեջ պետք է դնել նաև այն հորադիր բայաձևերը,

որոնք հարադիրներով արտահայտում են նոր ընդհանուր նշանակություն, ինչպես, օր.՝ վրեժ առնել (կամ՝ վրեժ խնդրել) = Պրոն ժոցձա (շուրիս ձիւ-բա), երես տալ = Յոռոն հցցցձա (սլիլիս չվեներու), ծափ տալ = Դաժոն ռաւոհա (տալիս րիսլիլիւ)։ այսպես նաև՝ ձայն տալ = վրց. խմիս գացեմա (կամ՝ խմիս միցեմա), ձեռք մեկնել (մեկին) = վրց. խելիս մոմարթվա ռոգնել, ուղքի գալ = վրց. զոնգե մոսվա, խելքի գալ = վրց. հկուագե մոսվա, սիրտը գնալ = վրց. զուլիս ծասվա... ինչպես նաև առանձին այն դարձվածքները, որոնք մի րաոի նշանակություն են սաանում ե կարող են նաև բարդ բառ համարվել. այսպես, օր., ձեռք վերցնել = վրց. խելիս աղերա, սիրտը բաց = վրց. զուլ-դիա, երեսից ընկնել = վրց. պիրիս դոկարգուա «հարգը՝ պատիվը կորցնել մեկի մոտ», երես ունենալ = վրց. պիրիս քոնքա «վարկ՝ համարում ունենալ», երես տալ = վրց. պիրիս չվենքա «շատ սիրելուց համարձակություն տալ, ապա և՛ շփացնել, անամոթ դարձնել», երես դարձնել = վրց. պիրիս ափցեվա «մեկին այլևս տեսնել չուզել, արհամարհել», գլուխ տալ = վրց. քավիս դակվա «զլխով բարեկեց... և այլն. և այլն»։

»

Այս բոլորը, ինչպես տեսանք նախորդ հատվածում, բառակազմության դրսևորման, այսպես ասած, նախնական ձևերն են կամ նախատիպերը, որոնք, ըստ լեզվամտածողական ընդհանրությունների՝ ինչպես դասավորված ձևերով ու միջոցներով, այնպես էլ շարադասություններում ու իմաստով ընդհանուր են հայոց և վրաց լեզուներում։ Այս բոլորը մեզ հանգեցնում է այն կետին, որից արդեն սկսվում են իսկական բառաբարդումները։ Այդ բարդությունները հայոց և վրաց լեզուներում՝ շնորհիվ զարգացման միևնույն ժամանակի վրա գտնվող լեզվամտածողության, բնականաբար, մեծ մասամբ ընդհանուր են։

Այժմ տեսնենք այդ ընդհանրությունները։

Բաղադրյալ բառերը հայոց և վրաց լեզուներում յուրահատուկ կազմություն ունեն։ Նրանք կազմվում են՝ 1) միևնույն արմատի կրկնությամբ, օր. լակ-լակ — Լա-Լա-Լա (լագ-լագ-ի), ծոր-ծոր = Մոր-Մոր-ի (ծուր-ծուր-ի)... և այլն, 2) երկու տարբեր արմատների միացումով, օր.՝ մեկ-տեղ = յոտ-ձոն (էրթ-գան), միջ-օրե՝ Պա-Լոց (շուա-դդե)... և այլն, 3) երկուսից ավելի բառերի կամ արմատների միացումով, օր.՝ քսան-և-մեկ = ԼՍ-Լա-Եր (օց-դա-էրթ-ի), վարդ-շաքար-ա-ջուր = Դա-Լա-Պա-Յա-Լ (վարդ-շաքար-ձ-դալ-ի)... և այլն։

Իսկ բովանդակության տեսակետից նրանք (բաղադրյալ անունները) կարող են արահայտել թե՛ մի գաղափար (օր.՝ տղա-մարդ — վրց. մամակացի), թե՛ երկու գաղափար (պոչ-ա-հատ = վրց. կուլ-մոնրիլի) և թե՛ երկուսից ավելի գաղափար (երկու-հարյուր-քսան-մեկ — վրց. օր. աս-օց-դա-էրթ-ի)։

Երևույթ գաղափար արտահայտող բաղադրյալ անունները սովորաբար լեզվամտածողության փոփոխումով կարող են դառնալ մի գաղափար դրսևորող բառեր. օր.՝ տան-տիկին = Դոն-Նաեժոն (դիա-սախլիսի)՝ մի ժամանակ երկու գաղափար պարունակող («տուն» և «տիկին») բառերը (այն է՝ երկու բառը) այսօր մի գաղափար են արտահայտում և մի բառ են։ Նույնը

կարելի է ասել նաև՝ տասն-մեկ=ստ-յոտ-մեծ (աթ-էրթ-մետի), հոր-քույր=ծածո-ժա (մամի-դա), քեռ-որդի=ճոն-հրա (դիս-ծուլի) և նման ուրիշ շատ բառերի մասին: Որ ասում ենք «տասնմեկ», «տասն» առանձին չենք պատկերացնում ու «մեկն» առանձին, այլ երկուսը՝ միասին, որպես մի թիվ (մի քանակություն, մի ամբողջություն)։ ուրեմն, «տասնմեկ» մի բառ է:

Միևնույն կազմությունն ռենցող բաղադրյալ բառերը լեզվամտածողության փոփոխության հետևանքով կարող են տարբեր նշանակություններ ձեռք բերած ու պահպանած լինել, այն է՝ ինչպես սկզբնական, այնպես էլ հետագա (երկրորդական) նշանակություններ. օր. առ-ու-տուր=սղոծ-ծոլցծա (աղեր-միցեմա) բառից նախ հասկացվել է «առնել ու տալ» (երկու գաղափար) և ապա՝ «վաճառականություն» (մի գաղափար):

Տարբեր արմատներից (կամ բառերից) կազմված մի գաղափար արտահայտող բաղադրյալ բառի բաղկացուցիչ մասերը կարող են իրար միացած լինել, նախ և առաջ, շաղկապով (հայերենում նաև՝ հոդակապով), երկրորդ ծագումով որոշիչ-որոշյալ կամ հատկացուցիչ-հատկացյալ բառերը իրար կողք-կողքի գործածվելով և մի գաղափար արտահայտելով կարող են դրսևորվել իրրև միասնական բառեր, երրորդ՝ բաղադրյալ բառամասերը կարող են իրար միացած լինել տարբեր հոլովներով և աարբեր հարաբերությամբ և այլն:

Հայոց և վրաց լեզուներում բարդությունները երբեմն միացած են և կամ ու=ժա (դա) շաղկապներով, ինչպես, օր.՝ քսան-և-մեկ=ույ-ժա-յոտո (օց-դա-էրթի), քսան-և-հինգ=ույ-ժա-նյոտո (օց-գա-խութի), օր-ու-գիշեր=ըլլ-ժա-լամի (դղե-դա-դամե). այսպես նաև՝ քար-ու-կիր=վրց. փա-դա-կիրի, դեմ-ու-դեմ=վրց. պիր-դա-պիր, այլ-և-այլ=վրց. սխվա-դա-սխվա... և այլն:

Երբ սովորաբար որոշիչ անունը գործ է ածվում որոշյալ անվան հետ, նրանց հարաբերությունը երկու լեզվում էլ աալիս է մի գաղափար արտահայտող բարդ բառեր: Ըստ բաղադրամասերի դասավորության՝ որոշիչը սովորաբար առաջին տեղում է լինում (երբեմն՝ երկրորդ տեղում):

Թև մեկ և թե մյուս լեզվում իրրև որոշիչ կարող են լինել գոյականը, ածականը, թվականը, դերբայը կամ բայարմատը:

Գոյական անունը՝ որպես որոշիչ-հատկացուցիչ՝ կարող է միացած լինել որոշյալ-հաակացյալին (անվանը), ինչպես, օր.՝ հոր-եղբայր=ծածո-ժա (մամի-գա), մոր-եղբայր=ճոն-ժա (դեի-ա), եղբոր-որդի=ճոն-հրա (միս-ծուլի). այսպես նաև՝ քեռ-որդի (կամ՝ քրոջ-որդի)՝ վրց. դիս-ծուլի, արեն-խում=վրց. սիսխիս-մսմեի, ոտաց-աման=վրց. փեխք-սացմեի, ասն-տի-կի=վրց. դիա-սախիսի, տան-տեր (կամ՝ տան-ու-տեր)=վրց. մամա-ստիսիսի (վերջին երկուսի մեջ՝ վրացերեն օրինակներում՝ որոշիչ-հատկացուցիչը երկրորդ տեղում է հանդես եկած)... և այլն:

Նման միացումներ կարող են լինել նաև ուրիշ հոլովներով, օր.՝ հյ. օրենս-գիրք, օրենս-դիր, կենս-ա-բեր. ձերբ-ա-կալ, ձերբ-ա-սուն... և վրց. յոտծոն-յոտո (երթման-երթի մեկը մյուսին, իրար), տալ-գալանալու (թավս-գաղասավալի գլխին անցած=գլխով անցած), տալ-լալու (թավս-լալի գլխին լալի). այսպես նաև՝ փիթ-կիրի քարով կիր, ավաղ-մգ մփի «վատառողջ», դ ուրադ-ուբբա «ուշադրություն»... և այլն:

Գոյականը՝ որպես որոշիչ՝ երկու լեզվում էլ ոչ միայն կարող է միա-

ցած լինել որոշյալ-գոյականին այս կամ այն հոլովով, այլ հենց առանց հոլովի էլ (երբեմն սեռական հոլովի իմաստով), ինչպես, օր.¹ հյ. քար-սիրտ (օր. «քարի սիրտ» նշանակությամբ), արև-մուտք («արևի մուտք»), արև-ելք («արևի ելք»), խաղ-լնկեր («խաղի ընկեր»), աղջիկ-պարոն, տղա-մարդ, կին-մարդ (կամ՝ կին-արմատ), մեջ-տեղ... և վրց. խալո-ձեղն (քալի-շվիլի «աղջիկ-զավակ»), խալ-ձաժոն (քալ-բատոնի «աղջիկ-պարոն»), ձեղն-խալ (գլխի-կողմի կամ՝ վիս-կողմի «գլուղացի մարդ»)։ այսպես նաև՝ պիրի-սախն «դեմքի երես», վաժի-շվիլի «արու գավակ», վաժ-կողմի «տղա-մարդ», մամա-կողմի «տղամարդ», դեղա-կողմի «կին-մարդ», դեղա-բերի «կին-պառավ», դեղա-միծա «մայր-հող», փուր-կամեի «կով-գոմեշ = էգ գոմեշ», փուր-իրեմի «կով-եղջերու = էգ եղջերու», խաղ-կամեի «եգ գոմեշ = արու գոմեշ», խար-իրեմի «եղ եղջերու = արու եղջերու»... և այլն։

Բոյական անվան նման մյուս անուններն էլ, որպես որոշիչ, մեծ մասամբ բարդության առաջին մասում են լինում։ Դրանք կարող են լինել. ա) թծակոմ անուններ, օր.² հյ. կես-գիշեր կես-օր, մեջ-տեղ, այլև հողակապով՝ մեծ-ա-տուն, մութ-ա-շեն, արաղ-ա-խոս, բարձր-ա-խոս, բարձր-ա-դիր, սև-ա-սիրտ, մութ-ա-հարս, մութ-ա-շեն, քոնկ-ա-գին... և այլն և վրց. ձեղն-խալ (ավ-դարի «վատ եղանակ»), լոլո-դաժոն (դիդ-պաժարի «մեծ վաճառական»), լոլո-ձաժոն (դիդ-մարխվա «մեծ պաս»)։ այսպես նաև՝ ձվի-փափ «թանկագին», պառ-մարի «փոքր հարս, նորահարս», շավ-ֆիլովի «սև սալոր», շուա-ղամն «կես-գիշեր», ախվ-սուփի «նորաշեն», ախվ-ցիսն «նոր բերդ», ինչպես նաև շրջված դասավորությամբ (նախ գոյական և ապա ածական անուն), զուլ-շավի «սիրտը սև», տար-խմել «լիճը չոր», ճալ-դիդի «անտառը մեծ»... և այլն, բ) թվակոմ անուններ, օր.³ հյ. մեկ-տեղ, երկ-սայրի, երկ-ամյա, երկու-հարյուր, եռ-անկյունի, քառ-անկյունի, չորեք-կուսի, հինգ-ամյակ,⁴ հարյուր-ամյա... և վրց. յոթ-ցան (էրթ-գան «մեկ տեղ»), օր-ձոն (օր-պիրա «երկ-սայրի»), ծոթ-ճլեղ (խոթ-ձեղի «հնգամյակ»)։ այսպես նաև՝ սամ-կուտխեդի «եռանկյունի», օր-ասի «երկու հարյուր», օր-ուրբե «երկ-ցանկ», օր-ծղ'ալի «երկադարյուր»... և այլն, գ) դերանուններ, օր.⁵ հյ. այս-օր, այդ-պես, այն-չափ, այս-քան, ինչ-պես, որ-չափ, որ-քան... և վրց. ձեղն-խալ (ամ-օղենա «այս չափ»), ձեղն-խալ (մագ-օղենա «այդ չափ»), ձեղն-խալ (իմ նախորդի «այնպիսի»)։ այսպես նաև՝ իմ-դիդ «այնօր», մաս-ուկան «այնուհետև», րամ-օղենա «որչափ», րա-մալի «ինչպիսի», րա-զոր «ինչպես»... և այլն, և այլն։

¹ Օր. հյ. հնգ-ամյակ բառն ըստ կազմության նույնն է ոչ միայն վրացերենում (օր.⁶ խուր-ձեղի «հնգ-ամյակ»), այլև ռուսերենում՝ пяти-летка... և այլն։ Բառակազմական միջոցների և ձևերի այսպիսի զուգադիպումներ ոչ թակավ կարող ենք գտնել նաև ուրիշ լեզուներում։ Այդ սա շատ բնական է։ Զե՛ որ անունները (գոյական, ածական, թվական և այլն) և նրանց հարակցման ու միացման միջոցներն ու ձևերը, որպես բառաօժիթական հնարքներ, երբեք էլ մեկուսացած չեն կարող լինել տարբեր լեզուներում և սովորաբար ընդհանուր լեզվամասնություն արդյունք են։ Այս իսկ առաջնություն, իմ կարծիքով, սխալ է այն «անուկանը», որի համաձայն այդ բոլորը ինչ-որ «փոխառության» կամ «ազդեցության» միջոցով պետք է բացատրել մի լեզվից մյուսը։

² Վրց. րա-զոր բառը, որ ծագում է րա-զվար ձևից (սա էլ է գործածական վրաց որոշ բարբառներում), նշանակում է «ինչ-ցից, ինչպես» և կազմությամբ ու նշանակությամբ նույնն է հայոց բարբառային (օր.⁷ ինչինականի բարբառի) ինչ-ցից > ինչ-ըլ բառի հետ։

3.

Բառարարդումները երկու լեզվում էլ, ինչպես տեսանք նախորդ հատվածներում, կատարվում են գրեթե միևնույն ձևերով ու միջոցներով:

Դրանք գերազանցապես տարբեր բառերի ընդհանուր շարադասական միացումներն են՝ լեզվատաժողության միևնույն ձևերով ու միջոցներով: Շարադասական միացումները դրսևորվում են նաև տարբեր հարադրություններով, որոնք կատարվում են երկու լեզվում էլ նմանապես ընդհանուր ձևերով ու միջոցներով: Հարադրություններ են երկու կամ ավելի գաղափար արտահայտող այն անունները, որոնք իմաստով ու շարադասական տեսակետից իրար մոտ են:

Հարադրությունները կարող ենք բաժանել երկու խմբի: Առաջին խմբի մեջ պետք է վերցնել այն հարադրությունները, որոնք թեև տարբեր, բայց իրար հետ գործածվող միևնույն տիպի անուններն են՝ ա) տարբեր դոյանասանք (օր.՝ ձեռն-ու-ոտ=վրց. խել-փելի), բ) տարբեր ժականներ (օր.՝ մերկ-տկուր=վրց. շիշվել-տիտվելի), գ) տարբեր քականներ (օր.՝ մեկ-երկու=վրց. երթի-օրի): Մրանք, այսպես ասած, համագոր հարադրություններ են, որոնց երկու մասերն էլ, եթե կարելի է ասել, համահավասար իրավունքներով են հանդես գալիս:

Երկրորդ խմբի մեջ պետք է առնել այն հարադրությունները, որոնք կազմված են տարբեր տիպի անուններից՝ ա) գոյականից ու ժականից (օր.՝ երես-պարզ=վրց. պիր-նաքելի), բ) գոյականից ու դերբայից (օր.՝ սիրտը կոտրած=վրց. գուլ-գատելիի): Մրանք արդեն իրար համագոր հարադրությունները չեն: այստեղ, ինչպես տեսնում ենք, մեկը (-երկրորդ մասը) մյուսի լրացումն է կամ որոշիչը:

Իրար համագոր հարադրությունները երկու լեզվում էլ ըստ բովանդակության կարող են լինել՝ ա) հոմանիշներ կամ նույնանիշներ, օր.՝ հյ. ընկեր-հասակակից, մերկ-տկուր, սև-խավար, անտեր-անտիրական, սոված-քաղցած, ուժ-գորություն, տեր-տիրական, դաշտ-հովիտ .. և վրց. Եղ-սմ-նանգի (տուլ-ամխանագի ընկեր-հասակակից), Միջր-ժիժր (չիշվել-տիտվելի մերկ-տկուր), Մեջ-նեղ (չավ-ընելի սև-խավար), այսպես նաև՝ օխեր-տիտի թանտեր-անտիրական, ձալ-գոնե ուժ-գորություն, քար-բուփ թուք-բորան .. և այլն, բ) հականիշներ, օր.՝ հյ. սոված-կուշտ, սար-ձոր, արու-էգ, լտվ-վատ, մեծ-փոքր, ավել-պակաս, մարդ-կին, սև-սպիտակ .. և վրց. միջր-մածր (մշիեր-մաճարի սոված-կուշտ), մոա-ծար (մթա-բարի սար-ձոր), լոթալ-մաճալի (էգ-արու), այսպես նաև՝ ավ-կարգի վատ-լավ, դիդ-պատարա մեծ-փոքր, մետ-նակելի լավել-պակաս, կաց-փալի մարդ-կին, սիկվիլ-նիցոցիլս մահ-կենդանություն .. և այլն, գ) այս կամ այն հոմանիշով իրար մոտ կանգնած տարբեր անուններ (գոյական), օր.՝ հյ. քիթ-պուր, աչք-ունք, բեխ-միրուք, կին-երեխա, քույր-եղբայր, թև-թիկունք, ձեռ-ոտ, հայրիկ-մայրիկ, տուն-տեղ, նետ-աղեղ, քար-այր, քար-ափ, որբ-և-այրի .. և վրց. ցեցիր-ձոր (ցխվիր-պիրի քիթ-բերան), տղա-հարձ (թվալ-ծարսի աչք-ունք), քր-քր (ծվեր-ուլվալի բեխ-միրուք), այսպես նաև՝ ցուլ-շվիլի էկին-երեխա, մխար-բեճի թև-թիկունք, խել-փելի ձեռ-ոտ, դեղ-

մամա մալարիկ-հալարիկ», դա-մա «քույր-եղբայր», պուր-մարիլի «աղ (ու) հաց», օտխլ-կտրի «տուն-տեղ», շվիլդ-իստրի «նետ-աղեղ», ցիխե-ֆալաֆի «բերդ-քաղաք»... և այլն:

Իրար ոչ համազոր հարադրությունները երկու լեզվում էլ ստացվում են այն ժամանակ, երբ դոյական անվանը նախադրվում է ածականը, որպես որոշիչ, և երկուսը միասին հանդիսանում են միայն մի երկրորդ անվան հատկանիշ: Օրինակ՝ լայն-ճակատ = լոյո-տյոլա (դիդ-շուբա) ցույց է տալիս՝ նա, ով որ լայն ճակատ ունի. մեծ-բերան = լոյո-ձորա (դիդ-պիրա) = նա, ով որ մեծ բերան ունի... և այլն:

Այսպիսի հարադրությունները արտահայտում են մի բան ունենալու գաղափար, որ դրսևորվում է շնորհիվ այն բանի, որ գոյականին ավելանում են՝ ածականը, թվականը, բայարմատը և այլն:

ա) Ածականով հարադրություններ են, օր.՝ հյ. լայն-բերան, օւ-աչ, օւ-երես, լայն-եռես ծուռ-բերան, այլև (հակառակ դասավորությամբ՝ նախ գոյականը և ապա ածականը)՝ ձեռն-ուլնայն, բերան-բաց, երես-պարզ... և վրց. լոյո-տաջա (դիդ-թավա մեծ-գլուխ) կամ հաստագլուխ), ճրմըլ-նյցրա (գրձել-ծվերա երկար-միջուք), յցրոլ-տցեա (ծվրիլ-փեխա մանր ոտ). այսպես նաև՝ շավ-թվալա սեւ-աչ, դիդ-դ'ուրա մեծ-ականջ, ցիփեր-թվալերա կապույտ-աչ, այլև (հակառակ դասավորությամբ՝ նախ գոյականը և ապա ածականը)՝ գուլ-մազարի սարտապինդ, գուլ-ուխվի սարտառատ. խել-մծիփե ձեռն-հաս. պիր-շավի երես-սև կամ սևերես... և այլն:

բ) Թվականով հարադրություններ են, օր.՝ հյ. երկ-երես, երկ-ճյուղ, երկ-հարկ, ֆառ-անկյուն, եռ-անկյուն, չուք-ոտանի... և վրց. օր-ձորի (երկ-բերան), օր-դառ (օր-կապի երկ-ճյուղ), օտե-տցե (օթխ-փեխի շորք-ոտանի). այսպես նաև՝ աթ-գոջա տաս-մատնյա... և այլն:

գ) Բայարմատով հարադրություններ են, օր.՝ հյ. անձ-նվեր, անձ-ուրաց, ձեռն-պալ, ձեռն-տու, ձեռն-հաս, օր-պալա, բերան-բաց, ջր-գիր, հաց-քուխ... և վրց. ձոր-լոռ (պիր-դիա բերան բաց), յլր-մոքրոլ (դ'ուր-մոճրիլի տականջը կտրած), օլաբ-օմեցեթլ (օլախ-այններուլի տոնաշեն). այսպես նաև՝ խել-դիա ձեռն-բաց, քավ-դ'ավիծդ'բուլի տան-ուրաց... և այլն, և այլն:

4.

Բայց սրանով, իհարկե, չեն սահմանափակվում հայոց և վրաց լեզուների, այսպես ասած, բառաստեղծական մտածողության դրսևորման ընդհանուր ձևերն ու միջոցները:

Բառաստեղծական հնագույն միջոցներից մեկն էլ բառերի կամ բառարմատների կրկնությունն է, որ բավական տարածված է հայոց և վրաց լեզուներում՝ ինչպես անունների, այնպես էլ բայերի մեջ (մեծ մասամբ վերջիններում):

Բառերի կամ բառարմատների կրկնությունը երկու լեզվում էլ կատարվում է տարբեր ձևերով, այն է՝ միևնույն պարզ բառերի կամ բառարմատների կրկնությամբ հնչյունների փոփոխությամբ, հնչյունների անկումով կամ հավելումով և այլն:

Կրկնվում են սովորաբար կարճ, մեկ կամ երկու վանկից բաղկացած բառերը, որոնք միանում են իրար մեծ մասամբ գծիկով կամ շղկապով։ Այս ձևով կատարվում է սովորաբար իմաստի սաստկացում և այլն։

Այստեղ պետք է նշել, որ որոշիչը որոշյալի մոտ երկու լեզվում էլ թիվ չի ունենում, բայց երբեմն, այսպես ասած, «շատի» կամ «սաստկացման» գաղափարն արտահայտելու համար տեղի է ունենում նրա (այն է՝ որոշիչի) կրկնությունը։ Նման գեպքերում որոշյալը կարող է և՛ եզակի մնալ, այսպես, օր.՝ տեսակ-տեսակ ալյուր - ճոճ-ճոճոճ տոճիլո (նաիր-նաիրի փքվիլի), արագ-արագ գնալ-հիճ-հիճոճ Նեղա (չքար-չքարի սվա), սիրուն-սիրուն աղջիկներ = Լամաճ-Լամաճ խաղցո (լամազ-լամազի քալերի)։ այսպես նաև՝ մանր-մանր ճուտեր-վրց. ծվրի-ծվրիի ճուճուլբի, կարմիր-կարմիր խնձորներ վրց. ծիթի-ծիթիի վալիբի, նոր-նոր հացեր-վրց. ախալ-ախալի ուլբի, տաք-տաք կերակուր-վրց. ցիլ-ցիլի սամբի... և այլն։

Այսպիսով, ուրեմն, ածականների (կամ մակբայների) կրկնությունները երկու լեզվում էլ սովորաբար սաստկացնում են նրանց (ածականների կամ մակբայների) իմաստը՝ միացնելով նաև բազմապատկերյալն կամ շատության գաղափարը, ինչպես, օր.՝ կլոր-կլոր - Թրթր-Թրթր (մրգվալ-մրգվալի «շատ կլոր»), սև-սև - Թաճ-Թաճ (շավ-շավի «շատ սև»), կամաց-կամաց = Եղծա-Եղծա (նեբա-նեբա «շատ կամաց»)։ այսպես նաև՝ քիչ-քիչ = վրց. ցուտ-ցուտ, արագ-արագ = վրց. մալ-մալի, երբեմն-երբեմն = վրց. խան-դա-խան, ավելի-ու-ավելի - վրց. ուփրո-դա-ուփրո, դեմ ու գեմ - վրց. պիր-դա-պիր, ալ-և-ալ-վրց. սիվա-դա-սիվա, ինչ-ինչ - վրց. րա-դա-րա, շատ-ու-շատ = վրց. բիվր-բիվրի, սառը-սառը - վրց. ցիվ-ցիվի... և այլն։¹

Քվականների կրկնությունները երկու լեզվում էլ բազմապատկերյալն գաղափարի հետ միասին արտահայտում են նաև բաշխական գաղափարը (նշանակությունը), օր.՝ մեկ-մեկ (կամ՝ մի-մի) = Թոթո-Թոթո (թի-թո-թիթո) նշանակում է «յուրաքանչյուրին մեկ, մեկական»։ Այսպես նաև՝ երկու-երկու (կամ՝ երկ-երկու) = Լո-Լո (օր-օլի «երկուական»), երեք-երեք = Եճճ-Եճճ (սամ-սամի «երեքական»), հինգ-հինգ = Ելլ-Ելլ (խութ-խութի «հնգական»), տասը-տասը = Ետ-Ետ (աթ-աթի «տասական»)... և այլն։

Իսկ գոյականների կրկնությունները սովորաբար արտահայտում են ատկանիչի (ածականի) գաղափարը և կարող են նաև իրեն մակբայ գործածվել, ինչպես, օր.՝ փունջ-փունջ = Երծա-Երծա (կոնս-կոնս), տեսակ-տեսակ = Եճճ-Եճճ (նաիր-նաիրի), բուռը-բուռը = Ելլ-Ելլ (մուճա-մուճա), խումբ-խումբ - Ելլ-Ելլ (լգուփ-լգուփի), տեղ-տեղ = Ելլ-Ելլ (աղ-գիլ-աղգիլ)... և այլն։

¹ Այս ձևի կրկնականների շարքը պետք է դասել, իմ կարծիքով, նաև այնպիսի կրկնականներ, որոնք բայաձևերից են կազմված. բայց այս դեպքում արդեն ժամանակ չեն ցույց առնում։ Դրանք պատահում են երկու լեզվում էլ. սովորաբար բարբառներում, սահմանափակ քանակությամբ, այսպես, օր.՝ հյ. խափես-խափես խաբերա (խափես ըզմական փղանակի ներկա երկուրդ գեմթի բայաձևից), կրկ. կրկ կամ կրի-կրի «շատ-շատ կրկն», «առ բան կրելը, հավաքելը» (կրել բայի հրամայական եղանակի կրկնված ձևը), սիրի-սիրի «բուռն անթառամ, աղբիմ-մեղմ, երեքնուկ», վազե-վազե «վազող, արագ քայլող (ծաղ-բուռն անուշ, որ առնիս են արագազնաց մարդկանց)»... և վրց. ծավալ-ծավալ (վրց. ծավալ «կենսամ» ձևի կրկնություն)։ Դասվածում են նրան, ով ասում է կենսամ. բայց միշտ տեղում է մնում և այլն։

Այս կրկնությունները՝ նայած թե որտեղ և ինչպես են գործածված՝ արտահայտում են բազմազանության և բազմակիության գաղափար, ինչպես, օր.¹ բուռ-բուռ-վրց. մուճա-մուճա նշանակում է «բռներով, բուռը բռի ետևից», տեսակ-տեսակ=վրց. նաիր-նաիրի՝ «զանազան տեսակի», տեղ-տեղ-վրց. ալազ-ալազ՝ այստեղ-այնտեղ, տարբեր աեղերում... և այլն:

Բառերի կամ բառարմատների կրկնության ժամանակ բառերից մեկի ձայնավորը կամ բաղաձայնը երբեմն փոխվում է ուրիշ հնչյունի, կամ բուլբուլին գուրս է ընկնում և կամ նոր հնչյուն է ավելանում: Այսպիսի կրկնությունները ընդարձակում են բառի նշանակութայունը՝ երկու լեզվում էլ որոշ բառաստեղծական դեր կատարելով. այս միջոցով հնարավոր է լինում հասկանալ մի առարկա իր նմաններով, իր պարագաներով, կամ մի հատկանիշ իր նման կամ մոտիկ հատկանիշներով:

Այստեղ կարելի է նշել նաև այն կրկնությունները, որոնց պարզ արմատները մեծ մասամբ առանձին չեն գործածվում, բայց նրանց կրկնությունից նոր, գործածելի բառեր են կազմվում: Սրանք սովորաբար բնաձայն բառեր են: Բայց, իհարկե, միայն բնաձայն բառեր չեն: Այս կարգի բառերից են,¹ օր.² հյ. գր-գիռ, թր-թիռ, թր-թուռ, փր-փուր, ճր-ճիթ «ծղրիզ», ուր-ուր «ցին», վիթ-վիթ «արագաշարժ, ճապուկ», քր-քուր «փուխը, փափուկ (մսի մասին)», աղա-աղտ «շատ աղ պարունակող (ջուր, հող)», խար-խար «աղմկալից ձայն», աղջ-աղջ «աղջամուղջ», աղկ-աղկ «թույլ, ակար», բեկ-բեկ «բեկբեկված», գեղ-գեղ «երգեցողութայն ձայն»...³ և վրց. ծա-ծա (մա-մա «հայը»),³ ծա-ծա (պա-պա «պապ»), շո-շո (գո-գո «աղջիկ»): այսպես նաև՝ ձու-ձու «ծիծ», ստինք», ծամ-ծամ-ի «թերթեղանունք», քավ-քավ-ի «հասկ», կամ-կամ-ի «կաշաղակ», լոկ-լոկ-ի «լազ-լազ, արագիլ», քոն-քոն «դանդուղ», օր-օր-ա «սարդ», օփ-օփ-ի «հոպ-հոպ», գոր-գոր-ի «թավալգոր», չուխ-չուխ-ի «խոխոջյուն», ծուր-ծուր-ի «ծոր-ծոր, ծոր-ծորալ», փար-փար-ի «ուրախություն», խար-խար-ի «խար-խար, հրոց», ցիմ-ցիմ-ի «առկայծել», կաշ-կաշ-ի «փայլուն», կամ-կամ-ի «կափ-կափել», չափ-չափ-ի «չխ-չխ-ոց», ցախ-ցախ-ի «դող-գող-ոց», ջախ-ջախ-ի «չխկ-չխկ-ոց», բախ-բախ-ի «բխ-բխ-ոց», փախ-փախ-ի «փխկ-փխկ-ոց», քախ-քախ-ի «թխ-թխ-ոց», բուտ-բուտ-ի «բա-բա-ոց, մրթմրթոց», նուպ-նուպ-ի «ճպ-ճպ-ոց», բորի-բորի «քվիթ լինելը», նավ-նավ-ի «ճնճողակ», գուլ-գուլ-ի (գուլ-«սիրա» բառից) «մեջտեղ», կիպ-կիպ-ի «ցինի ձայնը», օլ-օլ-ի «ուրուր», ձագ-ձագ-ի «դողդողոց», ծղ ալ-ծղալ-ի «ջրջրոտ՝ ջրալի», նիկ-նիկ-ի «ճկճկոց,

¹ Այս և հետագա կրկնավոր բառերի օրինակները մեծ մասամբ բերում եմ հայերենը՝ Սա. Մախաթյանցի Հայերեն բացատրական բառարանից (4 հատորով), իսկ վրացերենը Ս. Օրբելիանու վրաց բառարանից, Ս. Մենթելաշվիլու Քիզիլ՝ուրի Հեքսիկոնից և այլն:

² Կրկնության այս ձևը, որ անհամեմատ շատ առաժառակ է նաև հայոց և վրաց լեզուներում, Հ. Անադյանը իր հոդվածում («Հայերենի բնաձայն և կրկնավոր բառերը», Հանդես Ամսօրեայ, 1899, Վիեննա, էջ 206—6) առնում է հայերեն կրկնավոր բառերի առաջին ձևի մեջ և համարում բուլբուլին նման նախալեզվին, կամ թե չէ «մատանդություն ծնած նախալեզվին» (ն. ա. էջ 236), որով, իհարկե, բուլբուլին անտեսում է այն հանգամանքը, որ կրկնության այս ամենապարզ ձևը բուլբուլին նման է միաժամանակ ոչ հնգվորական (օր.¹ կովկասյան՝ քարթվեկական) լեզուներին (անս՝ այստեղ, անմիջապես ներքևում և այս հոդվածի 6-րդ հատվածում):

³ Վրացերեն կրկնական բառերի մի մասը բերում ենք Ակակի Շամիձեի վրաց բերականության գրքից (აქავი შანიძე, ქართული გრამატიკის საფუძვლები, I საგვეთი, თბილისი, 1942):

ճովողուն», ջուլ-ջուլ «ջուլուն» հավերին կանչելը», վար-վար-ի «վառվառուն» (մեզր. վալ-ի «կայծակ», որից՝ վիլուա «կայծակը փայլատակում է, այ-րում է»)։ և այլն (նման կրկնությունների թիվը երկու լեզվում էլ, մանա-վանդ ժողովրդական լեզուներում, չափազանց մեծ է)։

Այստեղ պետք է նշել նաև նույնատիպ կրկնությունները շաղկապի միջոցով, ինչպես, օր.՝ այլ և այլ «տարրեր, տեսակ-տեսակ», դեմ-ու-դեմ, լի-ու-լի, ծակ-ու-ծակ, կուչ-ու-կուչ «կուչ եկա՞ս. կծկված», մութ-ու-մութ, ցեղ-ու-ցեղ «ցեղացեղ»... և վրց. Յո՛ւ-ժա-Յո՛ւ (պիր-դա-պիր «դեմոդեմ»), Նե՛յա-ժա-Նե՛յա (սխվա-դա-սխվա «այլևայլ»), Եղ-ժա-Եղ (խել-դա-խել «ձե-ռաց»), այսպես նաև՝ փեխ-դա-փեխ «կրնկակոխ», կար-դա-կար «դռնեդռն», բար-դա-բար «հավասար»... և այլն։

Կրկնությունների մեծ մասը, ինչպես ասացինք, կազմվում են հնչյուն-ների փոփոխությամբ. դրանցից են, օրինակ՝

ա) կրկնությունների բաղաձայնների փոփոխությամբ (կամ ալլիտերա-ցիայով), ինչպիսիք են՝ հյ. գլոր-մլոր «գլոր-գլոր», դիզի-բիզի «զարդա-րուն, գունդգուն», թուխ-մուխ, հաց-մառ, սուտ-մուտ, չորիկ-մորիկ, ճանճ-մանճ, ցախ-մախ, կլոր-մլոր, խժ-դուժ և խուժ-դուժ «խուժադուժ», թըս-վըս «դանդաղաշարժություն», թոի-վոի «թեթևուիկ», լոթի-մոթի «լոթի, փողոցային սրիկա», պարապ-սարապ, լոկե-փոկե «արսանդի», հա-մոգել-լամոգել, թափ-թաց «բոլորովին թաց», լուփ-լուս «բոլորովին լուսավոր», խազ-խակ «խակ, խակ-խուկ», խաղ-խամ «վանդակի խաղեր՝ ճաղեր», կար-կաշ «դղում», կար-կատ «կարկատած», ցան-ցառ, բոզ-բոջ, դոդ-դո՛... և վրց. հոն-հոն-ո (չիխ-բիխ-ի բամբակից հունդը հնդրոդ), հըճ-Լըճ-ո (չուգ-լուգ-ի «փոքրիկ քունգ») Գո՛ւ-ձո՛ւ (ծարա-մարա «վատախոս»)։ այսպես նաև՝ ֆինճ-մանճ-ուկա «բույսի տեսակն է», ցազ-լազ-ի «վատ ձի», ջուղա-մուղո «վատ-մատ մարդիկ», ֆուց-մաց-ի «մանր-մունր կտորտանք», չալա-բուլա «կամած հարդ», նախոր-մախոր-ի «փշրանքներ», մուտրուկի-չուտրուկի «քու-ռակ-մուռակ», պած-մած-ունա «պուճուր», չալամ-կալամ-ի «գրիչ», կամ-կալ-ի «դողդողոց», ծան-ծալ-ի «թափառել» և սան-սալ-ի և տան-տալ-ի և չան-չալ-ի «մանդալու տեսակները», գար-գալ-ի «ծիրան», սուն-սուլ-ե=ծուն-ծուլ-ի և դուն-դուլ-ի և տուն-տուլ-ի և ձուն-ձուլ-ի և ցուն-ցուլ-ի «վազքի տեսակները» չուր-չուլ-ի «փսփոց», զվիր-զվին-ի «թագ», ձեր-ձետ-ի «ծերպ», կեր-կետ-ի (կամ՝ կիր-կիտ-ի) «շատ պինդ», փիր-փիր-ի «թիթեղ», կոր-կուա-ի «կորկոտ», չեր-չետ-ի (կամ՝ ցեր-ցետ-ի) «ցանցառ», դիր-դիտ-ա «գութանի փոքրիկ անիվը»... և այլն։¹

¹ Այստեղ, հայոց և վրաց օրինակներում, ինչպես տեսնում ենք, ալլիտերացիան կա-առվում է կրկնության թե՛ սկզբից և թե՛ վերջից՝ զրեթե բոլոր բաղաձայն հնչյուննե-րով, որ, մեր կարծիքով, հիշա կերպով խմբավորել ենք վերոհիշյալ մի կետում։ Անա-ռյանը (իր «Հայերենի բնագիտություն և կրկնավորությունները» հոդվածում, Հանդէս Ամսորեայ, 1889, Վիեննա, էջ 202—207 և 232—236) հայերեն կրկնավորների վերջում կատարված ալլիտե-րացիոն ձևերն առնում է իր խմբավորած կրկնավորների Յ-բղ (վերջին) ձևի մեջ (էջ 233. Նրա բերած օրինակներից են՝ թար-թափ-ել, ծան-ծաք-ել, ցն-ցուխ-ցուն-ցուղ, բոզ-բոջ, թաւ-թափ-ել—թափ-թափ-ել և այլն), իսկ կրկնավորների սկզբում եղած ալլիտերացիոն ձևերը նա վերցնում է իր խմբավորումների տարբեր՝ երրորդ օնվի երկրորդ կետում (էջ 307. Նրա բերած օրինակներն են՝ աուն-մուն, զավակ-մավակ, կնիկ-մնիկ)։ Այսպիսի բա-ժանում, մեր կարծիքով, ավելորդ էր (տես վերևում ա կետը)։ Այնուհետև՝ նրա խմբավորած այս նաչն երրորդ ձևի երրորդ կետում (էջ 307) առնված են ա>ու ձայնավորով փոխված

բ) Կրկնություններ բաղաձայնի ռեկուրսով, օր.՝ ալան-թալան, ալոց-գալոց «փորձանք-պատահար», ակաս-մակաս, աղապ-նաղապ, աղաա-պաղատ<ապաղ-նապաղ քցիր ու ցան», աղատ-պաղատ «աղաչանք», ալուն-փալուն «փալփուն», առոք-փառոք, արան-շարան, ավալ-թավալ «տղմա-թաթխ», ղոմ-ղորդ «բոլորովին ճիշտ», մուր-մունջ «մունջ-մունջ», բա-բախ-յուն (<*բախ-բախ-յուն), դա-դար, թխ-թխկ-ոց (կամ՝ թխկ-թխկ-ոց), չխ-չխկ-ոց (կամ՝ չխկ-չխկ-ոց), խո-խոջ-յուն, ծի-ծաղ || *ծա-ծաղ (<*ծաղ-ծաղ || *ծիղ-ծաղ), հոպ-ոպ (հոպ-հոպ), հագ-աղ, հայթ-այթ-ել, հոտ-ոտ-ել, հեղ-եղ...¹ և վրց. ոտլո-տոտլո (օթլո-թոթլո «թուլլ եփած ձու»), օլլօ-ծօլլօ (ացա-բացա «գնալ, գողունի գնալ»), օծցօ օծցօ (աճղա-բաճղա «վայրի մի ծառ է»), այսպես նաև՝ պոտ-տոտ-տ <*պտա-պատ-ա (կամ՝ սլած-ած-ա <*պած-սլած-ա «փոքրիկ»), բե-բեր-ի <*բեր-բեր-ի «պառավ», կո-կոր-ի <*կոր-կոր-ի «կոկոն», կամ կու-կուր-ի <*կուր-կուր-ի, *բուք-ուք-ո <*բուք-բուք-ո «թթածակ», խու-խուլ-ա <*խուլ-խուլ-ա «խուլ, տնակ», կա-կալ-ի <*կար-կալ-ի «ընկույթ», բեկ-եկ-ա <*բեկ-բեկ-ա «ոչխար», բուլց-ուլց-ա «կույր», ֆո-ֆու-ա <*ֆվա-ֆվա-ա «քարկոծել, չանչ տալ», մի-մից-ո <*մից-մից-ո «բազե», ճու-ճուլ-ա <*ճուլ-ճուլ-ա «ճուտ», ճի-ճիլ-ա <*ճիլ-ճիլ-ա «կուլա», զո-զր-ա *զոր-զոր-ա «ղղում»... և այլն (այս կարգի կրկնավոր բառերի թիվը բավական մեծ է երկու լեզվում էլ, մանավանդ բարբառներում):

գ) Կրկնություններ բաղաձայնի հավելումով, օր., հյ. ալալոց-թալալոց «արկած, փորձանք», ալալ-կալալ «զվարթ, կայտառ, վառվռուն», ալալ-մալալ «բարեսեսիլ, վայելուչ», ալուկ-մալուկ «զույնզգույն, երփներանգ», ածած-մածած «այս ու այն կողմը ածած», աճիճ-պաճիճ || աճուճ-մաճուճ || աճուճ-պաճուճ «առասպելական մարդկային ցեղ, թղաչափ հասակով...», անուլ-մանուլ «անուլ ու թթու խառն համով անհաջող խառնուրդ», օրոր-շորոր, ավել-մավել, աման-չաման, աղ-մաղ, առակ-չառակ, առակ-պառակ... և վրց. օծլո-մօծլո (ախլո-մախլո «մոտերք»), օրդ-մօրդ (արե-մարե «շրջապատ»), օլլօ-մօլլօ (աղ ալծաղ՝ ալի «աղմուկ-աղաղակ»), այսպես նաև՝

կրկնավորները (նրա բերած օրինակներն են՝ մարդ-մուրդ, մաղ-մուղ), որոնց նման մի քանի ձևերը նա առնում է նաև առանձին՝ իր խմբավորած կրկնավորների երկրորդ ձևի մեջ (էջ 206—207. նրա բերած օրինակներն են՝ խաղճ-ա-խուղճ... խար-խուր... ձան-ձուն, մարդ-մուրդ... հարթ-հուրթ... կարթ-կուրթ...), պարզ է, որ սրանք պետք է խմբավորվեն կրկնավորների տարբեր ձևի մեջ (անս մեր դ կետը)։ Այնուհետև՝ նրա խմբավորած կրկնավորների միայն երրորդ օնի առաջին կեսում (էջ 207) խմբավորված են նաև մ հնչյունի հավելումով կրկնավորները (նրա բերած օրինակներն են՝ անուլ-մանուլ, աղ-մաղ, օսկոր-մօսկոր և այլն), ինչպես նաև մի օրինակ էլ մ հնչյունի անկումով՝ Ասիս-Մասիս (Մասիս օտարի անունից)։ Սրանք (բաղաձայնի հավելումով և անկումով ձևերը), որ բավական տարածված են հայոց և վրաց լեզուներում, մեր կարծիքով, կրկնավորների առանձին ձևերի մեջ պետք է խմբավորված լինեին (անս վերևի համաձայնի ք. և զ. կետերը)։

¹ Այս բաղաձայնների անկումով կաղմված ձևերը Հ Աճառյանը (իւր «Հայերեն բնաձայն և կրկնավոր բառերը» ռոդվածում, «Հանդէս Ամսօրեայ», 1899, Վիեննա, էջ 232—233) խմբավորում է կրկնավորների 1-րդ և 5-րդ ձևերի մեջ. 4-րդ ձևի մեջ նա առնում է կրկնության առաջին մասից բաղաձայնի (կամ բաղաձայնների) անկումով կաղմված ձևերը և համաձայն է համարում «հնդեվրոպական» լեզուներին (էջ 236), իսկ 5-րդ ձևի մեջ վերցնում է, ընդհակառակը, կրկնության երկրորդ մասից բաղաձայնի անկումով կաղմված ձևերը և համաձայն չի կարողանում համարել «հնդեվրոպական» լեզուների ոգուն։ Այս երկու սկերմ 1,1 հավասարապես լայն չափերով տարածված են նաև ոչ-հնդեվրոպական (օր.՝ կովկասյան՝ քարթվեկական) լեզուներում։

օխեր-մօխեր-ի *ելոթի-մոթի*, օղ'լաղ'ի-չող'լաղ'ի *աանշնորհ* ու *բարձր*, ալխանա-չալխանա *սիրար նման*, իծիկծիկո-թիծիկծիկու *սերերանների խաղի սկզբի բառերն են*, կա-կում-ի *կոկոռոց*, քո-քոմ-ի *հեմ-հեմոց*, չու-չուն-ի *սփչացոց*, զու-զուն-ի *զոգոռոց*, դու-դուն-ի *բոգոռոց*, շի-շին-ի *թշնոց*, սի-սին-ի *սսվսվոց*, ծու-ծուն-ի *տորտնջոց*, *ինչպես նաև՝ կո-կուն-ի թխթխկոց*... և այլն:

դ) Կրկնություններ ձայնավորների փոփոխությամբ,¹ օր.² *հյ. ծակ-ծուկ* (կամ՝ *ծակ-ու-ծուկ*), *խաոր-խուոր*, *մարդ-մուրդ*, *աղքատ-ուղքուտ*, *լակոտ-լուկուտ*, *կաթ-կութ* *սկաթ* և *ինչ որ նման է կաթի*, *կառ-կուռ* *ստեպ*, *հաճախ*, *շատ անդամ*, *մանր-մունր*, *ձեն-ձուն*, *հարայ-հուրայ*, *հայ-հույ*, *ցախ-ցուխ* (կամ՝ *ցախ-ու-ցուխ*), *շախ-շուխ* (կամ՝ *շախկուր-շուխկուր*) *շրթխշրթխ ձայնը*, *փասա-փուսա*, *սպառ-սպուռ*, *ջարդ-ջուրդ* (կամ՝ *ջարդ-ջուրդ* *աանշան մարդիկ*), *սպառ-սպուռ* (կամ՝ *սպառ-ի-սպուռ*) *ամինչև վերջը*, *քած-րուծ* *աղջիկներ (անարգարար)*, *քանդ-քունդ* *«քանդ-քնդած, բոլորովին քանդած»*, *նաղ-ու-նուղ* (կամ՝ *նաղ-ու-տուղ*) ... և *նշյունա-փոփոխությամբ* *բառեր վրացերենում էլ շատ կան*, *ինչպիսիք են՝՝ ծաղած-ծղալ-ու* (բալախ-բուլախ-ի *խոտ-մոտ*), *սծալ-սծալ-ու* (ախալ-ուխալ-ի *սնոր-մոր*), *սծիլ-սծիլ-ու* (ձախիլ-ձուխիլ-ի *ձեն-ձուն*), *այսպես նաև՝* *նախույ-մուխույ-ի* *սկրծած-մրծած*, *նուդ'ար-նուդ'ուր-ի* *թափթփած*, *չումի-չում-ի* *ձեն-ձուն*, *մուլաշի-մուլաշի* *աանշորհ համբուրելը*, *խալալի-խալալի* *սարապ խմելը*, *ծկալի-ծկուլի* *զանդաղ ծծի ձայնը*, *փացի-փուցի* *սարագուլթյամբ* *վնալ*, *բափի-բուփի* *սպարծենկոտություն*, *բրացի-բրուցի* *սերերալ, տատանվել*, *նուդ'ի-նուդ'ի* *աանվերջ խոսել*, *փանցի-փունցի* *«ծոթեղեն, դործված քեղեն»*, *փափա-փուփա* *խաշիլ և նրա նման կերակուրներ*, *փաշի-փուշի* *սփորոտիք*, *փրացի-փրուցի* *սարաղ դործ անել*, *փխա-կի-փիսուկի* *բախախյուն*, *սղառա-սղուրի* *սարտի տրոփյուն*, *դադա-զուդա* *«քարքարոտ վերելք»*, *դ'առա-դ'ուրա* *«վատ-մատ բաներ»*, *խարա-խուրա* *«վատ մրցեղեն»*, *դումպուլ-զումպուլ-ի* *սփտած մտած*, *կանան-լունուն-ի* *հոր իստի ծղոտները*, *նագալ-նուզուլ-ի* *հարդ-մարդ*, *նուխուր-նուխուր-ի* (կամ՝ *նադ'ար-նուդ'ար-ի*) *զեն ածելու կրծած հաց-մաց*, *նարչեվ-նուլչուլ-ի* *«ջուղած-մուղած»*, *րումե-րումե* *բան-ման*, *տեղա-ուրդա* *«դառանցել»*, *կակո-կուկա* *«քաղցրեղեն»*, *ժումի-ժումի* *«ժամ-ժում»*, *ինչպես նաև մի ժամանակ վերջահանգ ձայնավորների փոփոխությամբ՝ շախտ-չուխի* *«թաթ-թրոց»*, *բախա-բուխի* *«թխթխկոց»*, *նախտ-նուխի* *«ճարճքոց»*, *բաղա-բուղի* *«թաթ-թրոց»*, *բակա-բուկի* *«թակթկոց»*, *նապո-նուպի* *«ճպճպոց»*, *դլուպա-դ'լուլի* *«շատ բան իրար ետևից կլանել»*, *տղ ապու-տղ ուլի*՝ *տղ'լուպա-տղ'լուլի* *«թափթփոց»*, *պոնտա-պունտի* *«թափթփոց»*, *խաբա-խաբի* *«թաթթքոց»*, *դապա-դուլի* *«թափթփոց, կաթկթսց»*, *լաժա-լուժի* *«ճարճատյուն»*, *բարա-*

¹ Ձայնավորների փոփոխությամբ կազմված կրկնությունները Հ. Աճառյանը իր «Հայերենի բնագիտական և կրկնավոր բառերը» հոդվածում, «Հանգես Ամստերդամ, 1899, Գի- եննա, էջ 206—207) վերցնում է միայն տեղի ձայնավորի փոփոխությամբ կազմված ձևերը իր խմբավորած կրկնավորների երրորդ մեկի մեջ, որ «հնդեվրոպական» կոչված լե- րուների հետ հաստատապես չի կարողանում կապել (էջ 236)։ Կրկնությունների այս ձևա- արածմամբ է հայոց և վրաց լեզուներում (մանավանդ նրանց բարբառներում), բայց միակ- ձևը չէ ձայնավորների փոփոխությամբ կազմված կրկնավոր ձևերի մեջ (անս վերևի հա- վածը)։

թվերի և թխարա-թխուրի «որոշ ձայներ», զամպո-զամպի «խիելուց առաջացած ձայներ», ծամ-դամ-ուծում «ծամանակ-անծամանակ»... և այլն:

Բացի ա>ու հնչյունափոխությունից, որ քիչ չէ հայոց և վրաց լեզուների կրկնությունների մեջ, պատահում են նաև՝ ուրիշ ձայնավոր հնչյունափոխություններ՝ ա) ե>ու հնչյունափոխությամբ կրկնություններ, ինչպես, օր.[՝] հյ. չեմ ու չում «բերանով չհամաձայնել, բայց սրտանց ուզենալ, նազ ծախելը», ձեն-ձուն (<ձայն-ձուն) կամ՝ ձեն-ու-ձուն «ձայն-ծպտուն»։ կեր-ա-կուր «ուտելիք»... և վրց. եյ-եյ (խե-խու «ծառ-մառ, փայեղեն, ատաղձ») ցցո-ցցո-ո (փեր-փուր-ի «զույն-մույն»), ճց-ճց-ո (նեկ-նուկ-ի «ճկույթ-մկույթ»)։ այսպես նաև՝ խեկ-խուկ-ի «ժոր-ժոր», երթ-ուրթ-ի (կամ՝ ուրթ-ի-երթի) «միմյանց», բեր-բուր-ի «պառավ-մառավ», ձվել-ձվուլ-ի «հին ու մին», լեֆ-լուֆ-ի «տականք, գիրտ», կեմտ-կումտ-ի (կամ՝ կաճտ-կուճտ-ի «հատ ու կենտ»), կամ թե չէ հակառակ (ու>ե) հնչյունափոխությամբ՝ նուր-նեկ-ի (նուր-ի «աման» բառից)։... և այլն (նման կրկնավորներ վրացերենում անհամեմատ ավելի շատ են), բ) ու հնչյունափոխությամբ կրկնավորներ, ինչպես, օր.[՝] ճի-ճու (>ճու և ճճի), խիճ-խուճ «խճեղեն», կիճ-կուճ «քարեր»... և վրց. ծոք-ծոք-ո (բիճ-բուճ-ի «տղա-մղա»), ծոլ-ծոլ-ո (խիլ-խուլ-ի «պտուղ-մտուղ»), ծոնո-ծոնո-ո (բինդ-բունդ-ի «աղջա-մուղջ»)։ այսպես նաև՝ նիւ-նոււ «ճուներ», փինթ-փունթ-ի «վատ-մատ», փիւ-փոււ «կերակուրներ (մանկ. լեզվով)», խիբուլ-խուբուլի (կամ՝ խիբա-խուրա) «երար խառնված վատ մրգեր, մարդուն ֆուսող մրգեղեն», կիկնա-կուկնա (կամ՝ ցիցֆնա-ցուցֆնա) «փոքր-մոքր», կիրծի-կարծա «զլբա-կոնձի»... և այլն (նման կրկնություններ վրացերենում անհամեմատ ավելի շատ են) գ) ի>ա (կամ՝ ա>ի) հնչյունափոխությամբ կրկնություններ, որ հայերենում գրեթե չեն պատահում (եթե հաշվի չառնենք, օր.[՝] վաշ-վիշ «ափսոսանք, ախուժախ, հեծեծանք», ձաճ-ձիւր «ձանձրույթ» և այլն), վրացերենում անհամեմատ ավելի շատ են, ինչպես, օր.[՝] ծոնո-ծոնո-ո (բինդ-բունդ-ի «աղջա-մուղջ»), ծոք-ծոք-ո (ճիվ-ճավ-ի «մի տեսակ թռչուն»), լուդ-լուդ-ո (բիժ-բաժ-ի «արշալույս»)։ այսպես նաև՝ կիւ-կուս-ի «արագ վազող», խիւ-խու-ի (կամ՝ կիւ-կու-ի) «կոկալ, օղակ», կրաճու-կրիճու «կոհնչ»... և այլն, դ) ա>ա (կամ՝ ա>ա) հնչյունափոխությամբ կրկնավորներ, որ երկու լեզվում էլ հազվադեպ են պատահում։ այսպես, օր.[՝] հյ. եայ-իւյ-ել «անարգել, վիրավորական բան ասել մեկի դեմ», սստ և սատ «պինդ, կարծր, կուռ»... և վրաց. ծոհ-ծալ-ո (բոր-բալ-ի «անիվ»), ծոհ-ծալ-ո (գոր-գալ-ի «կծիկ»), լու-լու-ո (ֆոց-մաց-ի կամ՝ ֆուց-մաց-ի «մանրած»)։... և այլն, ինչպես նաև այլ բաղաձայնների և ձայնավորների հնչյունափոխությամբ վրացերենում հանդիպում են նաև հետևյալ ձևերը՝ զիժ-մաժ-ի «լիթ» (զիժ ընդհանուր բառից), ֆոխ-մախ-ի «խրճիթ-մրճիթ» (ֆախ «քոխտիկ, խրճիթ» բառից), կուճ-մաճ-ի «փորոտիք» (կուճ-ի «ստա-մոքս» բառից), ցուտ-մատա «քիչ-միչ» (ցուտ «քիչ» բառից), ցուդ-մադ-ի «վատ-մատ» (ցուդի «վատ» բառից), դուրե-մարե «ծերպեր», ձոնձ-մոնձ-ի «ցնցոտիք» (ձոնձ-ի «ձորձ» բառից), ֆինձ-մանձ-ուկա «հին ու խոտի անուն է»... և այլն, և այլն:

5.

Բառաստեղծության դրսևորման ձևերն ու միջոցները, ինչպես կարելի է տեսնել նախորդ հատվածներից, շատ ու շատ կողմերով ընդհանուր են

հայոց և վրաց լեզուներում: Այդ ընդհանրությունը հասնում է այն առտի-
ճանին, որ առերես նայելիս ումանց կարող է թվալ, թե դրանք մեկը մյուսի
բառացի թարգմանությունն են կամ, այսպես ասած, «փոխառությունը»:
Բայց երբ թափանցում ենք դրանց խորքը, տեսնում ենք, որ դա, իրոք,
այդպես չէ:

Դրանք, պարզ ասած, ընդհանուր լեզվամտածողության արդյունք են՝
ստեղծված մեծ մասամբ իրարից անկախաբար լեզուների ստադիալ դար-
դացման միևնույն աստիճանին և մեզ հասած որպես վերապրուկներ (որոնց
նմանությամբ հետագայում կազմվել են արդեն, այս կամ այն չափով, և՛
նոր բառաձևեր):

Այս է պատճառը, որ բառաստեղծության դրսևորման ընդհանուր ձև-
վերն ու միջոցները շատ անգամ կարող ենք գտնել նաև այնպիսի լեզու-
ներում, որոնք դժվար թե չփման որևէ կետ ունեցած լինեն իրար հետ և
«ազդակից» էլ չեն նույնիսկ տրադիցիոն լեզվաբաժանման «տեսակետ-
ներով»:

Բայց արի տես, որ հնդեվրոպաբանության «տեսակետներով» իրարից
«ազդակցական» կապերով անջատված լեզուները հաճախ ընդհանուր լեզ-
վամտածողության պրոցեսի դրսևորման ավելի փայլուն օրինակներ ունեն:
Այսպիսով, բառաստեղծական ընդհանուր ձևերի ու միջոցների դրսևորման
ցայտուն օրինակներ մենք տեսնում ենք նաև հայոց ու վրաց լեզուներում
(այն լեզուներում, որոնք հնդեվրոպական «տեսակետներով» իրար հետ «ազ-
դակցական» ոչ մի կապ չունեն, բայց որոնք, ինչպես և Մառն է ասում,
ազդակցական ամենասերտ կապակցության մեջ են):

Բառաստեղծական ձևերի ու միջոցների դրսևորման մեջ ամենահա-
զույիլը կա՛մ, ինչպես Ն. Մառն է ասում, գերհնաբանական միջոցը («арху-
арханчный способ»)՝ կրկնություններն են, որոնք բազմազան ձևերով,
ինչպես տեսանք վերջին հատվածում, վերապրած ու պահպանված են հա-
յոց ու վրաց լեզուներում, մանավանդ բարբառներում:

Որ կրկնությունները, ինչպես Ն. Մառն է դիտել, երբևեթ բառա-
ստեղծական միջոցներից են, դեռ այսօր էլ գա կարելի է տեսնել մեզ հետա-
քըրքրող երկու լեզվի մի շարք օրինակներում: Վերցնենք մի քանի օրի-
նակ, ինչպես հայտնի է, վրց. քավ-ի բառը «գլուխ» է նշանակում, իսկ
նույնի կրկնությամբ՝ քավ-քավ-ի՝ «հասկ»։ այսպես նաև՝ վրց. ծամ-ի նշա-
նակում է «ակնթարթ», վայրկյան», իսկ ծամ-ծամ-ի «արտևանունք, թեր-
թերունք»։ վրց. ծղ'ալի «ջուր» է նշանակում, իսկ ծղ'ալ-ծղ'ալ-ի՝ «ջրալի,
նոսր»։ վրց. ծավալ նշանակում է «եղնամ», իսկ սրա կրկնությամբ՝ ծավալ-
ծավալ-ա «այն մարդը, որ ասում է՝ կգնամ, բայց շարունակ մնում է տե-
ղում»... և այլն: Նույն ձևով նաև հայերենում. օր. հյ. տեր բառի կրկնու-
թյունից կա՝ տեր-տեր, որ նշանակում է «քահանա»։ հեր «մագքբառի կրկ-
նությամբ կազմված է հեր-հեր, որ նշանակում է «երկաթե այն սանրը,
որով բուրդը, կանեփը և այլն մաքրում են թփից, մղեղից և այլն»։ հոս
«այստեղ» բառից կազմված է հոս-հոս կրկնականը, որը պոլսահայերի ծաղ-
րական անունն է՝ «թեթևամիտ, թեթևոլիկ» նշանակությամբ, վազե բա-

¹ Н. Я. Марр, Избранные работы, т. IV, 1937, էջ 167. Հղված՝ Карфаген и Рим, fas u jus (из яфетической Африки—Берберии). ինչպես նաև նույնի՝ «Родная речь—могучий рычаг культурного подъема» (Избранные работы, т. V, էջ 393—437):

յառակից կրկնությամբ գործ է ածվում վազե-վազե «վազող, արագ քայլող (ծաղրարար)» իմաստով, կամ խաբես ձևից՝ խաբես-խաբես՝ «խաբերա» նշանակությամբ և այլն և այլն:

Քիչ չեն այնպիսի դեպքեր, երբ մի շարք կրկնություններ հայոց և վրաց լեզուներում գուգաղիպում են իրար թե ձևով և թե բովանդակությամբ, բայց այնուամենայնիվ ճիշտ չի լինի դարձյալ նրանց «փոխառություն» խնդիրը դնել: Նման կրկնություններից մենք կարող ենք վերցնել, օր՝ հյ. ծուր-ծուր (եծորել՝ բայի կրկնականը) և վրց. ծուր-ծուր-ի «նույն նշ.» հյ. ուր-ուր և վրց. ու-ու-ի «միևնույն թռչունը» նշանակելով, հյ. եռա-ուպ և վրց. ոփ-ոփ-ի «միևնույն թռչունը». հյ. կու-կու (>կկու) և վրց. զու-զու-լ-ի «միևնույն թռչունը», հյ. լագ-լագ=վրց. լակ-լակ-ի «արագիլ», հյ. սար-սար-ակ=վրց. սար-սար-ակ-ի «թռչունի մի տեսակը», հյ. ցր-սիր=վրց. ցրի-ցի-ա «ճճին, ծղրիղ», կամ թե չէ՝ հյ. վաղ-վաղ=վրց. մալ-մալ «շուտ-շուտ», հյ. խար-խար=վրց. խար-խար-ի «աղմկալից ձայն, զոհհիկ ծիծաղ», հյ. ծիվ-ծիվ=վրց. ծիվ-ծիվ-ի «ծլվլոց», հյ. տար-տար «(մանկ.) այս ու այն կողմը շարժվել»=վրց. տան-տալ-ի «այս ու այն կողմը շարժվել, գնալ», հյ. վա-վա և վրց. վա-վա «(մանկ.) ցավ, հիվանդություն, վերք»... և այլն և այլն:

Եթե այս կարգի (ձևով ու բովանդակությամբ գուգաղիպող) կրկնությունների դեպքում դժվար է փոխառություն» խնդիրը դնել, ապա նույն ձևերով ու միջոցներով կատարվող կրկնությունների դեպքում արդեն նույնիսկ անկարելի է այդ մասին մտածել: Եվ դա շատ բնական է: Ինչպես վերևում նշեցինք, դրանք ընդհանուր լեզվամտածողության արդյունք են՝ ստեղծված իրարից անկախարար, լեզուների ստադիալ զարգացման միևնույն աստիճանին:

Զնայած նրան, որ կրկնությունները՝ հանդիսանալով ընդհանուր լեզվամտածողության արդյունք, այս կամ այն չափով, կարելի է գտնել նույնիսկ բոլոր լեզուներում, բայց այնուամենայնիվ դրանք ունեն և՛ իրենց լայն տարածման գոտիները՝ կրկնությունները, ինչպես ն. Մառն է նշում, լայն չափերով տարածված են միջերկրածովյան, աֆրիկյան և հարթավան լեզուներում. դերազանցապես Եվրոպայից դուրս գտնվող լեզուներում:

«Հնդեվրոպական կոչված հին լեզուներում (օր. հին հնդկերենում, հին հունարենում և լատիներենում), բացի բայաձևերից (հարակատար և առ-րիստձևերից), կրկնությունները կատարվել են նաև անուններում. այսպես, օր. հին հնդկ. ghar-ghar-as «աղմուկ», ghar-ghuri «ծղրիղ», dame-dame «ամեն տանը», div-diva «ամեն'օր». հին հուն. βαρ-βαρ-ος, ταρ-ταρ-ος, βε-βα-ος «ուժեղ, ամուր», αἰ-αἰ-ος «շրջան», πα-πα-ος «դերիա», αἰ-αἰ-ος «ամբողջովին և ամբողջապես». լատ. quer-querus «ողողողացող (տենդից)», cur-cul-io «կոկորդ», mur-mur «աղմուկ», me-mior «հիշող», quis-quis «յուրաքանչյուր», ինչպես նաև թվականները՝ հին հնդկ. panca-panca «տասն-տասն», dva-dva «երկու»

¹ См. Проф. др. М. М. Немецовой, Удвоение как «архаичный» способ слово- и формообразования (ապված՝ Պեմ-համալսարանի Ն. Մառի անվան կարիքների ուղի-ուղիներ, 1965, № 1 մոնոգրաֆում):

երկու»։ հին հուն․ $\mu\acute{\alpha}\text{-}\mu\acute{\alpha}$ «մեկ-մեկ», լատ․ *dua-dua* «երկու-երկու» և այլն¹։

Քիչ են օգտագործվում կրկնությունները, սակայն, հնդեվրոպական «նոր» լեզուներում։ Օր․ ռուսերենում կրկնություններ, որպես վերապրուկներ, միայն որոշ ձևերում են պահպանված․ *аю-аю* «կոլ-օ-կոլ «զանգ», *пер-е-пел-к-а* (<**пел-е-пел-к-а* «էդ լոր, մարի լորի»), *едва-едва* «հազիվ-հազ», *чуть-чуть* «մի քիչ, քիչ մնաց», *эле-эле* «հազիվ-հազ, մի կերպ»։ Ավելի կենսունակ են այս տեսակետից գերմանական և ռոմանական լեզուները․ *аю-аю*՝ անգլ․ *goody-goody* «խելոք, շնորհալի, համեստ (տգա)», *riff-raff* «բոկոտներ», գերմ *Sing-sang* «մեներգ»։ *Wir-warr* «իրարանցում, եռ ու զեռ, խառնաշփոթություն», *Zick-zack* «զիզզազ», ֆրանս․ *bon-bon* «կոնֆետ», *jou-jou* «խաղալիք» և այլն¹։

Առնեմ «անել» բայի աորիստը՝ տրարի «արեցի» ձևը բայարմատի կրկնությամբ միակ փայլուն օրինակն է հայերենում բայարմատի կրկնությամբ բայաժամանակաձևը ստեղծելու գործում։ Կրկնության այս ձևով հայերենը մոտենում է «հնդեվրոպական» կոչված այն լեզուներին (օր․ հին հնդկերենիս, հին հունարենին և այլն), որոնք անցյալ կատարյալը կադմել են բայարմատի կրկնությամբ և հեռանում է, թերևս, կովկասյան այն լեզուներից, մասնավորապես վրացերենից, որտեղ աորիստը արմատի կրկնությամբ կադմելու դեպք չի պահպանված։

Իսկ ինչ վերաբերում է անունների կրկնությանը, ապա հայերենը սերտ հարակցության մեջ է կովկասյան լեզուների, մասնավորապես վրացերենի հետ։ Մեզ հետաքրքրող երկու լեզվում էլ կրկնությունները, ինչպես երևում է վերջին հատվածից, զրսևորվում են բազմազան ձևերով ու միջոցներով։ Միջոցներից առաջինը և ամենատարածվածը երկու լեզվում էլ, ինչպես տեսանք, պարզ (մեծ մասամբ առանձին անգործածական) արմատի ուղղակի կրկնությունն է՝ առանց հնչյունափոխության։ Երկրորդը՝ նույնպես շատ տարածվածը՝ այնպիսի կրկնություններ են, որոնք երկու լեզվում էլ կատարվում են զրեթե բոլոր բաղաձայնների հերթական փոփոխությամբ կամ ալլիտերացիայով։ Այնուհետև քիչ չեն երկու լեզվում նաև այնպիսի կրկնություններ, որոնք կադմվում են կրկնության առաջին կամ երկրորդ մասից բաղաձայնի անկումով կամ հավելումով։ Եվ վերջապես՝ բավականաչափ քանակությամբ երկու լեզվում էլ կան այնպիսի կրկնություններ, որոնք կատարվում են կրկնության առաջին կամ մեծ մասամբ երկրորդ մասի ձայնավորի (զրեթե բոլոր ձայնավորների հերթական) փոփոխությամբ։

Այսպիսով՝ կրկնություններով բավականաչափ հարուստ են հայոց և վրաց լեզուները, որտեղ կրկնությունները, ինչպես արդեն նշեցինք, զրսեվորված են բազմազան ձևերով։

Հ․ Աճառյանը իր հոդվածում («Հայերենի բնաձայն և կրկնավոր բառերը» վերնագրով)² հայերենի կրկնավոր բառերն ըստ կազմության բաժանում է վեց ձևի։

¹ Այս օրինակները բերում ենք հետևյալ հոդվածից՝ Проф.-др. М. Я. Немировский, Удвоение как „арзнарханчый“ способ слово- и формообразования (Վ․ Մ․ Մալաուդի անվան Նրեանի Գեղամալուարանի Ն․ Մադի անվան կարիքատի աշխատություններ, № 1, 1945)։

² Տե՛ս՝ Է՛նանդէս Ամսօրեայ, 1909, Վիեննա, էջ 203—207 և 232—236։

Առաջին ձևի մեջ նա վերցնում է, ինչպես ինքն է ասում (էջ 205), այն բառերը, որոնք իրեն իսկական արմատ միավանկ են և կրկնվում են պարզ հարադրությամբ, «առանց դույզն իսկ փոփոխության», և բերում է օրինակներ, իսկ վերջում, ամփոփման մեջ (էջ 235—6), երբ իրեն հարց է առաջադրում, թե՛ «համաձայն են մեր կրկնավորները նախալեզվյան դրություն», տալիս է հետևյալ պատասխանը՝ «առաջին ձևը բոլորովին նման է նախալեզվին, երբ ի սկզբան յուր բոլոր կրկնավորները արմատին ամբողջական կրկնությամբը կձևացնեն», և անմիջապես ավելացնում է՝ «չենք ուզեր ըսել, թե այս ձևով հայ կրկնավորները նախալեզվյան վիճակը կներկայացնեն, այլ թե կրկնավորի այս ձևը ժառանգություն է մնացած նախալեզվին, և ըստ որում շատ պարզ և շատ բնական միջոց մըն էր, մինչև այսօր ալ կենդանի մնացած է մեր մեջ»:

Կրկնության այս ձևը պակաս չափով չի տարածված նաև կովկասյան լեզուներում, մասնավորապես վրացերենում (ինչպես կարելի է տեսնել նաև այս հոդվածի նախորդ հատվածում հակիրճորեն տրված հայ-վրացական օրինակներից): Եթե, ինչպես Հ. Աճառյանն է ասում, հայերենում «կրկնավորի այս ձևը ժառանգություն է նախալեզվին» (ն. տ., էջ 236), ապա կրկնավորի այդ նույն ձևը, որ բազմաթիվ օրինակներով դրսևորված է վրացերենում (և ընդհանրապես կովկասյան լեզուներում), ինչպես պետք է բացատրել: Արդյոք ինչ որ «ժառանգությամբ» թե՛ «փոխառությամբ»: Պարզ է, ոչ մեկով և ոչ մյուսով, այլ, իրոք որ, ինչպես մենք ենք հարցադրում, ընդհանուր լեզվամտածողության դրսևորումներով՝ լեզուների ստադիալ զարգացման միևնույն աստիճանին:

Երկրորդ ձևի մեջ Հ. Աճառյանը վերցնում է, ինչպես ինքն է ասում (էջ 206), այն կրկնավորները, որոնց արմատական ձայնավորը կրկնության երկրորդ անդամի մեջ ուրիշ ձայնավորի կփոխվի. այդ ձայնավորը նա համարում է ու և բերում է օրինակներ: Իսկ վերջում, ամփոփման մեջ (էջ 236) ապահոված ղղալով իրեն, որ իբր թե «կրկնավորի այս» (իմա՝ առաջին) ձևը ժառանգություն է մնացած նախալեզվին», այնուհետև նշում է, որ «նույն ապահովությունը չկա սակայն երկրորդին համար», և իրեն հետևյալ հարցը առաջադրելով՝ «ճշմարիտ է թե նախալեզվյան արմատները, ինչպես նաև անոր ժառանգները կրկնության ժամանակ ձայնավորի փոփոխություն կկրեն, բայց մերն ալ ասոնց հետ վերաբերություն ունի՝ արդյոք», անմիջապես պատասխանում է՝ «թերևս»:

Կարելի է ասել, որ թերևս այդպես լինի, բայց որ հայերենը, իրոք, կրկնականի այս ձևի մեջ էլ, ինչպես կարելի է տեսնել նախորդ հատվածի մեր բերած օրինակներից, ամենասերտ կապակցության մեջ է տեղական լեզուների, առաջին հերթին վրացերենի հետ, դա անհերքելի փաստ է:

Երրորդ ձևի եամար, ըստ Հ. Աճառյանի, հետևյալ երեք պայմանները կան. 1. ամեն ձայնավորով սկսվող բառ կրկնության ժամանակ ձայնավորից առաջ ավելորդ մ կառնի, օր՝ անուն-մանուն, աղ-մաղ, 2. ամեն (բացի մ) բաղաձայնով սկսվող բառ կրկնության ժամանակ նախատառ բաղաձայնը մ-ի կփոխի, օր՝ տուն-մուն... 3. եթե բառը մ-ով սկսվի, կրկնության երկրորդ մասի արմատական ձայնավորը կփոխվի ու-ի, օր՝ մարդ-մուրդ... (էջ 207): Իսկ վերջում, ամփոփման մեջ (էջ 236), ասում է, որ՝ «երրորդ ձևը չկա մեր մյուս ցեղակից քույրերուն մեջ»: Քանի որ հա-

յերենը, նրա կարծիքով, զուտ «հնդեվրոպական» լեզու է և կրկնության երրորդ ձևը չկա «հնդեվրոպական» կոչված մյուս լեզուներում, ուստի սովորաբար փոխառության արդյունք է համարում հայերենում, նշում է նախ, որ «արդի թուրքերենը մերինին ճիշտ հավասար գործությամբ այսպիսի կրկնավորներ կարող է կաղմել», բայց «այս թվում է նրան «հայոցմէ փոխառյալ» միայն ժողովրդական լեզվի մեջ» գոյություն ունենալու պատճառով: «Ավելի իսկատիպ» է համարում կովկասյան լեզուները, քանի որ «վրացերենի, ինչպես և լազերենի մեջ... մ տառը», նրա կարծիքով, «իբրև ավելորդ կարող է կցվիլ բառերու սկիզբը կամ վերջը», ուստի հավանական է համարում, որ «մեր ձևին ալ ծաղումը կովկասյաններեն ըլլա»:

Պարզ է, որ այս դեպքում էլ հաշվի չեն առնված Հ. Աճառյանի կողմից ընդհանուր լեզվամտածողության դրսևորումները հայոց և վրաց լեզուներում՝ լեզուների ստադիալ զարգացման միևնույն աստիճանին, և իրոք որ, լեզուների ընդհանրությունները բացատրված են ինչ-որ ձևական «փոխառության» միջոցով:

Զորյուրդ ձևի մեջ Հ. Աճառյանը վերցնում է այն կրկնությունները, որոնց արմատական վերջին մասը թեթևանում է բառի առաջին եզրի մեջ. օր.՝ պա-պանձ-ել, փո-փոխ-ել... (էջ 232): Իսկ եիցքերուրդ ձևի մեջ նա վերցնում է չորրորդի հակառակ կրկնավոր ձևերը, որտեղ երկրորդ մասն է թեթևացած՝ առաջին բաղաձայնն ընկնելով, օր.՝ հայթ-այթ-ել, պատ-ատ-ել... (էջ 233): Վերջում, ամփոփման մեջ արդեն (էջ 236), ասում է՝ «չորրորդ ձևին վրա ոչինչ ունենք ըսելու, քանի որ բոլոր հնդեվրոպականները մեզի համաձայն են», իսկ «հինգերորդը զժբախտաբար համաձայն չէ ընդհանուր հնդեվրոպական լեզուներու ոգուն... ուստի և զժվար է ընդունել, որ այս կարգի ձևերն ալ բնիկ հնդեվրոպական ըլլան»:

Նախ պետք է ասել, որ, ինչպես կարելի է տեսնել նախորդ հատվածից էլ, հայոց և վրաց լեզուները անհամեմատ հարուստ են վերևի, Հ. Աճառյանի վերցրած՝ չորյուրդ և եիցքերուրդ ձևերի կրկնավոր բառերով: Այս ձևերը այնքան լայն տարածում ու ընդգրկում ունեն տեղական լեզուներում, որ միանգամայն ավելորդ է հայերենի այս ձևերը «համաձայնեցնել» հնդեվրոպական լեզուների հետ: Այնուհետև շատ տարօրինակ է, երբ իրար հետ կապված բառաստեղծական հիշյալ միջոցներից մեկը համաձայնեցվում է «հնդեվրոպական» կոչված լեզուների «ոգուն» հետ, իսկ մյուսը ոչ (որը և «զժբախտություն» է համարվում): Պարզ է, որ այստեղ ևս Հ. Աճառյանի կողմից անտեսված է լեզվամտածողության և բառաստեղծության այն ընդհանուր պրոցեսը, որի հետևանքով բառաստեղծական շատ ու շատ ձևերն ու միջոցները կարող են հեշտությամբ զուգահիշվել ինչպես «հնդեվրոպական», այնպես էլ ոչ «հնդեվրոպական», ինչպես «մոտավոր», այնպես էլ «հեռավոր» լեզուների մեջ՝ առանց «հնդեվրոպական» ինչ-որ ձևական «ազդակցական» կապերի, ստեղծված հաճախ իրարից անկախաբար՝ լեզուների ստադիալ զարգացման միևնույն աստիճանին:

Վերջապես՝ վեցերորդ ձևի մեջ Հ. Աճառյանը վերցնում է այն կրկնավոր բառերը, որոնց երկու եզրերը տարբեր բաղաձայններով են հանգում. օր.՝ թար-թափ-ել, թավ-թափ-ել, ծան-ծաք-ել... և այլն (էջ 233): Իսկ վերջում, ամփոփման մեջ (էջ 236), հայոց կրկնավոր այս ձևերը չգիտե ինչ անել՝ համարել «նախալեզվյան», թե ոչ: Այսպես թե այնպես, մի բան

պարզ է. որ նման կրկնավոր ձևերով ևս հարուստ են հայոց և վրաց լեզուները. որոնք այնքան նման ընդհանուր ձևեր ունեն, այնքան իրար հարազատ ձևեր, որ դժվար է որոշել, թի որին են պատկանում, հայերենին, թե՛ վրացերենին: Դրանք հավասարապես հարազատ են երկուսին էլ, ընդհանուր՝ երկուսի համար:

Այսպիսով, ուրեմն, հայոց² և վրաց լեզուների այս ընդհանրությունները ևս, ինչպես տեսանք, պետք է կապել լեզվամատածողության այն ընդհանուր պրոցեսի հետ, որի ընթացքում առաջ են եկած բառաստեղծության գրսեորման ընդհանուր շատ ձևեր ու միջոցներ հաճախ այնպիսի լեզուներում, որոնք իրար հետ հնդեվրոպական ճազակցական կապերով չեն առնչվում: Այս տեսակետը մեզ դուրս է բերում տրադիցիոն լեզվաբանական կաշկանդաններից ու արգելքներից և յույս սփռում մեր առաջ՝ լեզվական պատմական իրողությունները ճիշտ կերպով վերծանելու:

А. Мурвалаян

Общие черты словотворчества в армянском и грузинском языках

РЕЗЮМЕ

В общем процессе языкомышления первичные формы выявления слов-понятий непосредственно связываются с разными частями человеческого тела, или его членами. Такого рода отражения в той или иной мере наблюдаются во всех языках, в особенности в армянском и грузинском, которые меняя свое (прямое) значение вместе с изменением языкомышления, получили новый смысловой оттенок.

Новый смысловой оттенок получили также некогда выступавшие совместно и выражавшие одно и то же понятие те слова и формы армянского и грузинского языков, которые вместе с изменением языкомышления изменили свое первоначальное значение и сегодня воспринимаются как отдельные слова (или совокупности слов). Они, так сказать, давнишние способы словотворчества, которые в армянском и грузинском языках во многом сходны.

Эти общности доходят той степени, что со стороны индоевропейстики они кажутся переводами один другого или, т. сказать, „заимствованиями“.

Они (эти новые формы слов), ясно выражаясь, результат общего способа языкомышления, созданные независимо друг от друга на одной и той же ступени стадияльного развития, но дошедшие до нас в виде пережитков.

Наидревнейший из способов и форм словотворчества или, как говорит Н. Я. Марр, „архиархаичный способ“, это повторения, которые в разнообразных формах пережиты и сохранены в армянском и грузинском языках, в особенности в их диалектах.

Немало и таких фактов, когда ряд повторений в армянском и

грузინском языках совпадают и по форме и по содержанию. В подобных случаях трудно ставить вопрос даже их „заимствования“, как обыкновенно поступают многие.

Если затрудняет ставить вопрос „заимствование“, даже при совпадении с соответствующими формами и содержанием, то при совершении повторений теми-же способами и формами не следует и думать об этом. И это вполне естественно, ибо они результат общего языкомышления.

В обоих интересующих нас языках повторения встречаются в разнообразных формах и способах. Первый и самый распространенный способ,—это прямое повторение корня без фонетических изменений, второй, тоже распространенный способ,—это повторение, которое совершается через аллитерацию. Немало в обоих языках я таких повторений, которые образуются через выпадение или прибавление согласного звука в первой или второй части повторения. И наконец в обоих языках существуют такие повторения, которые образуются изменением гласного звука в первой или второй части повторения.